ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ 18/88

ք. Վանաձոր «16» հոկտեմբերի 2018 թ.

«Վանաձորի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Մամիկոն Ասլանյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բիդեք» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Ավետիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Վանաձոր համայնքի փողոցների կապիտալ նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **պայմանագրի կնքման օրվանից հաշված 40 օրացուցային օր:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օր:Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[1]:

---

[1] Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **46 044 000** (քառասունվեց միլիոն քառասունչորս հազար) ՀՀ դրամ, որից **7 674 000** (յոթ միլիոն վեց հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[2].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[3]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

---

[2] Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:

[3] Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[4]:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի

[4] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:

վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Վանաձորի համայնքապետարան	**«Բիդեք» ՍՊԸ**
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22	**ք. Երևան, Նեկրասովի 86**
Կենտրոնական գանձապետարան	**Ամերիաբանկ ՓԲԸ**
Հ/Հ900232539024	**Հ/Հ 1570015559920100**
ՀՎՀՀ 06901936	**ՀՎՀՀ 00450801**
---------- Մ.Ասլանյան	---------- Գ. Ավետիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 16 » հոկտեմբեր 2018թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ 18/88 *ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[5]*
«ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

					Հազ. ՀՀ դրամ	
Հ/Հ	Հիմնավորումը	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը գինը
Աղայան փողոցից մինչև Սարոյան փողոց երթևեկելի մասի հիմնանորոգման						
1	27-35	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում	մ^2	150.00	0.067	10.050
2	1-1612 1-1618	Բերվածքի կտրում բուլդոզերովտեղափոխելով մինչև 20մ	1000մ^3	0.077	179.168	13.796
3	1-1592	քանդված ա/բետոնի և բերվածքի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով	1000մ^3	0.089	596.269	53.068
4	Գ-130-10	Ավելորդ բնահողի տեղափոխում ավտոինքնաթա-փով 10կմ հեռ.	տն	116.20	2.646	307.465
5	1-1163 1-1166	Բնահողի տոփանում մեխանիզմով /20սմ հաստ./	100մ^3	11.860	23.136	274.393
7	27-144	Խճի նախաշերտի իրականացում 10սմ բիտումի տարածումով 4.12կգ/մ2	100մ^2	11.86	213.529	2532.454
8	27-164-2 27-165-2	Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Բ» տիպի ա/բետոնով /50մմ/	100մ^2	11.86	467.164	5540.565
9	1-1594	4-րդ կարգի բնահողի մշակում բարձելով ա/ինքնաթափ մեխանիզմով	1000մ^3	0.004	2064.837	8.259
10	1-962	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ^3	2.50	4.339	10.848
11	1-968	Նախապատրաստական շերտ փափուկ բնահողց	մ^3	1.20	1.029	1.235
12	1-1235	Հավաքովի ե/բ ջրահեռացման վաքերի տեղադրում	մ	43.00	4.514	194.102
13		Հավաքովի ե/բ ջրահեռացման վաքեր	մ^3	2.30	166.174	382.200
14	1-968	Ավելորդ բնահողի բարձում ա/ինքնաթափ, ձեռքով	մ^3	4.00	1.029	4.116
15	Գ-130-10	Ավելորդ բնահողի տեղափոխում ավտոինքնաթա-փով 10կմ հեռ.	տն	5.60	2.646	14.818
		Ավազահավաքի կառուցման աշխատանքներ				
1	1-962	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ^3	2.50	4.339	10.848
2	11-6	Խճի նախաշերտի կառուցում 100մմ հաստությամբ /20-40մմ/	մ^3	0.41	15.274	6.262
3	6-1	Ավազահավաքի հատակի բետոնացում Վ-15, 100մմ հաստ.	մ^3	0.41	48.102	19.722

[5] Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:

4	26-50	Ավազահավաքի պատերի բետոնացում Վ-15, 200մմ հաստ.	մ³	0.82	113.627	93.174
5	25-17	Մետաղական ճաղաշարի կառուցում	տն	0.2020	74.080	14.964
6		Անկյունակ L50x5	մ	16.80	2.540	42.672
7		Անկյունակ L63x5	մ	9.60	3.198	30.701
8		Ամրան Φ25 A-III	տն	0.090	421.390	37.925
9		Ամրան Φ10 A-I	տն	0.002	421.390	0.843
10	14-398	Մետաղական էլեմենտների յուղաներկում 2 անգամ	մ²	8.00	1.260	10.080
11	1-968	Ավելորդ բնահողի բարձում ա/ինքնաթափ, ձեռքով	մ³	2.50	1.029	2.573
12	Գ-130-10	Ավելորդ բնահողի տեղափոխում ավտոինքնաթա-փով 10կմ հեռ.	տն	3.50	2.646	9.261
Աղյուսագործների փողոցից Բաֆֆու փողոց ընկած հատվածի երթևեկելի մասի հիմնանորոգման						
1	27-35	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում	մ²	375.00	0.067	25.125
2	1-1592	Քանդված ա/բետոնի և բերվածքի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ³	0.034	596.269	20.273
3	Գ-130-10	Ավելորդ բնահողի տեղափոխում ավտոինքնաթա-փով 10կմ հեռ.	տն	28.30	2.646	74.882
5	27-144	Խճի նախաշերտի իրականացում 10սմ բիտումի տարածումով 4.12կգ/մ2	100մ²	2.29	213.529	488.981
6	27-164-1 27-165-1	Խոշորահատիկ ծածկույթի ա/բետոնով ծածկույթի/6սմ/	100մ²	2.29	531.650	1217.479
7	27-169	«Բ» տիպի մանրահատիկ ա/բետոնով ծածկույթի կառուցում /3սմ/	100մ²	2.290	293.631	672.415
8	1-1594	4-րդ կարգի բնահողի մշակում բարձելով ա/ինքնաթափ մեխանիզմով	1000մ³	0.006	2064.837	12.389
9	1-962	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	1.00	4.339	4.339
10	1-968	Նախապատրաստական շերտ փափուկ բնահողց	մ³	1.00	1.029	1.029
11	1-1235	Հավաքովի ե/բ ջրահեռացման վաքերի տեղադրում	մ	64.00	4.514	288.896
12		Հավաքովի ե/բ ջրահեռացման վաքեր	մ³	3.43	166.174	569.977
		<u>Ավազահավաքի կառուցման աշխատանքներ</u>	-	-		
1	1-962	4-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ³	6.20	4.339	26.902
2	11-6	Խճի նախաշերտի կառուցում 100մմ հաստությամբ /20-40մմ/	մ³	1.10	15.274	16.801
3	6-1	Ավազահավաքի հատակի բետոնացում Վ-15, 100մմ հաստ.	մ³	1.10	48.102	52.912
4	26-50	Ավազահավաքի պատերի բետոնացում Վ-15, 200մմ հաստ.	մ³	2.20	113.627	249.979
5	25-17	Մետաղական ճաղաշարի կառուցում	տն	0.528	74.080	39.114
6		Անկյունակ L50x5	մ	43.20	2.540	109.728
7		Անկյունակ L63x5	մ	26.40	3.198	84.427
8		Ամրան Φ25 A-III	տն	0.230	421.390	96.920
9		Ամրան Φ10 A-I	տն	0.006	421.390	2.528

10	14-398	Մետաղական էլեմենտների յուղաներկում 2 անգամ	մ^2	20.00	1.260	25.200
11	1-968	Ավելորդ բնահողի բարձում ա/ինքնաթափ, ձեռքով	մ^3	6.20	1.029	6.380
12	Գ.-130-10	Ավելորդ բնահողի տեղափոխում ավտոինքնաթա-փով 10կմ հեռ.	տն	8.68	2.646	22.967
Բազում թաղամասից Խնձորուտ թաղամաս տանող ճանապարհի երթևեկելի մասի հիմնանորոգման						
1	27-35	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում	մ^2	250.00	0.067	16.750
2	1-968	Բերվածքների քանդում ձեռքով	մ^3	2.00	2.460	4.920
3	1-1592	Քանդված ա/բետոնի, բերվածքի և գոյություն ունեցող բնահողի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.017	596.269	10.137
4	Գ.-130-10	Ավելորդ բնահողի տեղափոխում ավտոինքնաթա-փով 10կմ հեռ.	տն	0.27	2.646	0.709
5	27-144	Խճի նախաշերտի իրականացում 10սմ բիտումի տարածումով 4.12կգ/մ2	100մ^2	0.52	213.529	111.035
6	16-4	Ծածկույթի փոսային նորոգում միջնահատիկ «Բ» տիպի ա/բետոնով ,5սմ /մինչև 5.0քմ/	մ^2	66.00	5.573	367.818
7	16-5	Ծածկույթի փոսային նորոգում միջնահատիկ «Բ» տիպի ա/բետոնով ,5սմ /մինչև 25.0քմ/	մ^2	456.00	5.226	2383.056
Գրիբոյեդովի փողոցի երթևեկելի մասի հիմնանորոգման						
1	27-35	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում	մ^2	360.00	0.066	23.760
2	1-1612 1-1618	Բերվածքի կտրում բուլդոզերովտեղափոխելով մինչև 20մ	1000մ^3	0.030	178.604	5.358
3	1-1592	քանդված ա/բետոնի և բերվածքի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.048	594.157	28.520
4	Գ.-130-10	Ավելորդ բնահողի տեղափոխում ավտոինքնաթա-փով 10կմ հեռ.	տն	74.00	2.637	195.138
5	1-1163 1-1166	Բնահողի տոփանում մեխանիզմով /20սմ հաստ./	100մ^3	1.706	23.064	39.347
6	27-20	Ավազակոպիճային նախաշերտի կառուցում 5սմ հաստ.	մ^3	42.650	3.844	163.947
7	27-144	Խճի նախաշերտի իրականացում 10սմ բիտումի տարածումով 4.12կգ/մ2	100մ^2	8.53	200.274	1708.337
8	27-164-2 27-165-2	Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Բ» տիպի ա/բետոնով /50մմ/	100մ^2	8.53	466.171	3976.439
Մոսկովյան փողոցից դեպի Շիրվանզադե փողոց տանող ճանապարհի երթևեկելի մասի հիմնանորոգման						
1		Ա/բետոնե ծածկույթի ֆրեզերում 3սմ հաստությամբ	մ^2	182.00	0.426	77.532
2	27-35	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում	մ^2	100.00	0.066	6.600
3	1-1592	Գոյություն ունեցող և առաջացած շին. աղբի բարձում ա/ինքնաթափին էքսկավատրով	1000մ^3	0.059	596.269	35.180
4	Գ.-130-7	Գոյություն ունեցող և առաջացած շին. աղբի տեղափոխում ավտոինքնաթա-փով 7կմ հեռ.	տն	85.80	2.116	181.553

5	1-1612 1-1618	Ճանապարհային տաշտակի կառուցում վերին շերտի կտրելով և տեղափոխելով մինչև 20մ բուլդոզերով	1000մ³	0.041	178.604	7.323
6	1-961	3-րդ կարգի բնահողի ձեռքով	մ³	6.00	2.460	14.760
7	23-109 գ=0.5	Հավաքովի ե/բ դիտահորերի ապամոնտաժում	մ³	0.30	16.742	5.023
8		Հավաքովի ե/բ կափարիչ 1200x1200 թուջե մտոցի հետ միասին	հատ	1.00	100.332	100.332
9	27-83	Բացակայող բազալտե եզրաքարի տեղադրում 300x150	100մ	0.11	1194.424	131.387
10	27-144	Խճի նախաշերտի իրականացում 8սմ բիտումի տարածումով 4.12կգ/մ2	100մ²	0.32	198.043	63.374
11	16-4	Ծածկույթի փոսային նորոգում միջնահատիկ «Բ» տիպի ա/բետոնով ,5սմ /մինչև 5.0քմ/	մ²	53.00	5.573	295.369
12	16-5	Ծածկույթի փոսային նորոգում միջնահատիկ «Բ» տիպի ա/բետոնով ,5սմ /մինչև 25.0քմ/	մ²	45.00	5.226	235.170
13	27-251	Բիտումի լցաքաշխում գոյություն ունեցող ֆրեզերված ա/բ ծածկույթի վրա 0.7լ/մ2	տն	0.128	276.144	35.346
14	27-144	Խճի նախաշերտի իրականացում 10սմ բիտումի տարածումով 4.12կգ/մ2	100մ²	4.11	213.529	877.604
15	27-164-1 27-165-1	Խոշորահատիկ ծածկույթի ա/բետոնով ծածկույթի/6սմ/	100մ²	4.11	531.650	2185.082
16	27-169	«Դ» տիպի մանրահատիկ ա/բետոնով ծածկույթի կառուցում /3սմ/	100մ²	5.920	304.347	1801.734
Թիվ 15 դպրոց տանող ճանապարհի երթևեկելի մասի հիմնանորոգման						
1		Ա/բետոնե ծածկույթի ֆրեզերում 4սմ հաստությամբ	մ²	280.00	0.426	119.280
2	1-968	Բերվածքների քանդում ձեռքով	մ³	12.00	2.460	29.520
3	1-1592	Քանդված ա/բետոնի և բերվածքի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով	1000մ³	0.045	596.269	26.832
4	Գ-130-10	Ավելորդ բնահողի տեղափոխում ավտոինքնաթա-փով 10կմ հեռ.	տն	69.30	2.646	183.368
5	27-144	Փոսային նորոգման համար խճի նախաշերտի իրականացում 10սմ բիտումի տարածումով 4.12կգ/մ2	100մ²	0.07	213.529	14.947
6	16-4	Ծածկույթի փոսային նորոգում միջնահատիկ «Բ» տիպի ա/բետոնով ,5սմ /մինչև 5.0քմ/	մ²	18.00	5.573	100.314
7	27-251	Բիտումի լցաքաշխում գոյություն ունեցող ֆրեզերված ա/բ ծածկույթի վրա 0.7լ/մ2	տն	0.198	276.144	54.677
8	27-144	Խճի նախաշերտի իրականացում 10սմ բիտումի տարածումով 4.12կգ/մ2	100մ²	2.22	213.529	474.034
9	27-164-2	Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Բ» տիպի ա/բետոնով /40մմ/	100մ²	5.05	389.274	1965.834
Թիվ 28 դպրոց տանող ճանապարհի երթևեկելի մասի հիմնանորոգման						

1	27-35	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում	մ^2	100.00	0.067	6.700
3	1-1592	Քանդված ա/բետոնի և բերվածքների բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով	1000մ^3	0.004	596.269	2.385
4	Գ-130-3	Ավելորդ բնահողի տեղափոխում ավտոինքնաթա-փով 3կմ հեռ.	տն	6.80	1.375	9.350
5	27-144	Փոսային նորոգման խճի նախաշերտի իրականացում 10սմ բիտումի տարածումով 4.12կգ/մ2	100մ^2	0.78	213.529	166.553
6	16-4	Ծածկույթի փոսային նորոգում միջնահատիկ «Բ» տիպի ա/բետոնով ,5սմ /մինչև 5.0քմ/	մ^2	65.00	5.573	362.245
7	16-5	Ծածկույթի փոսային նորոգում միջնահատիկ «Բ» տիպի ա/բետոնով ,5սմ /մինչև 25.0քմ/	մ^2	133.00	5.226	695.058
Թումանյան թիվ 11 ԲԲԸ-ի կից փողոցի երթևեկելի մասի հիմնանորոգման						
1	27-35	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում	մ^2	520.00	0.066	34.320
2	1-1612 1-1618	Բերվածքի կտրում բուլդոզերովտեղափոխելով մինչև 20մ	1000մ^3	0.047	178.604	8.394
3	1-1592	քանդված ա/բետոնի և բերվածքի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով	1000մ^3	0.073	594.157	43.373
4	Գ-130-7	Ավելորդ բնահողի տեղափոխում ավտոինքնաթա-փով 7կմ հեռ.	տն	114.00	2.109	240.426
5	1-1163 1-1166	Բնահողի տոփանում մեխանիզմով /20սմ հաստ./	100մ^3	2.60	23.064	59.966
6	27-20	Ավազակոպիճային նախաշերտի կառուցում 5սմ հաստ.	մ^3	65.00	3.844	249.860
7	27-144	Խճի նախաշերտի իրականացում 10սմ բիտումի տարածումով 4.12կգ/մ2	100մ^2	13.00	200.274	2603.562
8	27-164-2 27-165-2	Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Բ» տիպի ա/բետոնով /50մմ/	100մ^2	13.00	466.171	6060.223
9	27-144	Փոսային նորոգման խճի նախաշերտի իրականացում 10սմ բիտումի տարածումով 4.12կգ/մ2	100մ^2	1.74	207.440	360.946
10	16-4	Փոսային նորոգում «Բ» տիպի ա/բետոնով /50մմ, մինչև 5քմ մակերեսով/	100մ^2	0.41	554.673	227.416
11	16-5	Փոսային նորոգում «Բ» տիպի ա/բետոնով /50մմ, մինչև 25քմ մակերեսով/	100մ^2	1.33	520.580	692.371
Գերեզմաններ տանող ճանապարհի երթևեկելի մասի հիմնանորոգում						
1	27-35	Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում	մ^2	80.00	0.066	5.280
3	1-1592	քանդված ա/բետոնի և բերվածքի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով	1000մ^3	0.004	594.157	2.377
4	Գ-130-7	Ավելորդ բնահողի տեղափոխում ավտոինքնաթա-փով 7կմ հեռ.	տն	6.80	2.109	14.341
7	27-144	Խճի նախաշերտի իրականացում 10սմ բիտումի տարածումով 4.12կգ/մ2	100մ^2	0.83	200.274	166.227
10	16-4	Փոսային նորոգում «Բ» տիպի ա/բետոնով /50մմ, մինչև 5քմ մակերեսով/	100մ^2	0.71	554.673	393.818

11	16-5	Փոսային նորոգում «Բ» տիպի ա/բետոնով /50մմ, մինչև 25քմ մակերեսով/	100մ^2	1.42	520.580	739.224
		ԸՆԴԱՄԵՆԸ				**44 937.896**
		ԱԱՀ 20%				8 987.579
		ԸՆԴԱՄԵՆԸ				**53 925.475**
		ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ				
Մեկ միավորի արժեքի մեջ ներառված են վերադիր ծախսերը, շահույթը, ժամանակավոր շենքերի և շինությունների արժեքը, կլիմայական պայմանների ազդեցությունից առաջացած ծախսը, շինաղբի տեղափոխման ծախսը, չնախատեսված ծախսերը						

Գնման առարկայի բնութագիր

- Ա/բետոնե ծածկույթի ֆոնդ 4 սմ հաստ
- Շին աղբի բարձում ինքնաթափին ձեռքով
- Շինաղբի տեղափոխում ա/ինքնաթափով մինչև 10կմ
- Հողային և հարթեցման աշխատանքների իրականացում
- Որոշ փողոցներում ե/բ ջրահեռացման վաքերի կառուցում
- Որոշ փողոցներում մայթերի նորոգում
- Խճային հիմքի կառուցում
- Ծածկույթի կառուցում մանրահատիկ «Բ» տիպի ա/բետոնով
- Դիտահորերի պակասող թուջե մտոցների տեղադրում
- Եզրաքարերի նորոգում
- Ավազընդունիչների կառուցում

Աշխատանքները կատարել համաձայն հետևյալ նորմաների և հաստատված նախագծով.
ՀՀ ՇՆ IV-11.05.02-99 - Ավտոմոբիլային ճանապարհներ
Աշխատանքների համար երաշխիքային ժամկետ է համարվում 1095 օրը:
Աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվում պայմանագրի կնքման օրվանից հաշված 40 օր:
Աշխատանքներն իրականացվելու են հատուկ բանվորական արտահագուստով՝ պահպանելով անվտանգության կանոնները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան

ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22

Կենտրոնական գանձապետարան

Հ/Հ900232539024

ՀՎՀՀ 06901936

---------- Մ.Ասլանյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Բիդեք» ՍՊԸ

ք. Երևան, Նեկրասովի 86

Ամերիաբանկ ՓԲԸ

Հ/Հ 1570015559920100

ՀՎՀՀ 00450801

---------- Գ. Ավետիսյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված թիվ 2
«16» հոկտեմբեր 2018թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ 18/88 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼ ՆՈՐՈԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Վանաձոր համայնքի փողոցների կապիտալ նորոգում	պայմանագրի կնքման օրվանից	պայմանագրի կնքման օրվանից 40 օրացույցային օր
ԸՆԴԱՄԵՆԸ		16.10.2018թ.	24.11.2018թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան

ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22

Կենտրոնական գանձապետարան

Հ/Հ900232539024

ՀՎՀՀ 06901936

---------- Մ.Ասլանյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Բիդեք» ՍՊԸ

ք. Երևան, Նեկրասովի 86

Ամերիաբանկ ՓԲԸ

Հ/Հ 1570015559920100

ՀՎՀՀ 00450801

---------- Գ. Ավետիսյան

/ստորագրություն/

Կ.Տ

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> պայմանում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:

Հավելված N 3
« 16 » հոկտեմբեր 2018թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ 18/88 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231220	Վանաձոր համայնքի փողոցների կապիտալ նորոգում										46044000	46044000	46044000	**46 044 000**

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան

ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22

Կենտրոնական գանձապետարան

Հ/Հ900232539024

ՀՎՀՀ 06901936

----------Մ.Ասլանյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Բիդեք» ՍՊԸ

ք. Երևան, Նելրասովի 86

Ամերիաբանկ ՓԲԸ

Հ/Հ 1570015559920100

ՀՎՀՀ 00450801

---------- Գ. Ավետիսյան

/ստորագրություն/

Կ.Տ

«ԲԻԴԵՔ»
"БИДЕК"
"BEDECK"
00450801

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____»«_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն